

## ԱՍՏՂԻԿԻ ԱՆՈՒԱՆ, ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱՒՈՐ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՄ

Հայոց հնագոյն առասպելածիսական համակարգում Աստղիկը գլխաւոր աստուածութիւններից մէկն է: Նրա անունը բազմիցս արձանագրուել է հայ պատմիչների եւ այլ մատենագիրների երկերում: Յիշատակուել են մի շարք կարեւոր հանգամանքներ, որոնք կապուած են նրա պաշտամունքի եւ գործառական յատկանիշների հետ: Ստորեւ կը փորձենք ներկայացնել ողջ աղբիւրագիտական նիւթը եւ արժեւորել դրանց ընձեռած տուեալները:

Աստղիկ դիցուհու մասին անգնահատելի տեղեկութիւններ է հաղորդում պատմահայր Մովսէս Խորենացին, մասնաւորապէս, նկարագրելով դիցուհու սրբատեղիներից մէկը. «...ի գլուխ լերինն Պաղատոյ, զոր ասէին սաստիկ յոյժ 'ի նմա լեալ դիւացն, տուն Արամազդայ եւ Աստղիկայ մեծարէին: Եւ յաճախ պաշտամամբք տօն կարդային, որ է Պաղատ»<sup>1</sup>: Ուրեմն, Պաղատ լերան նշուած տաճարներում հին ժամանակներում Արամազդին եւ իր դստերը նուիրուած մեծ տօնախմբութիւններ են տեղի ունեցել: Մի այլ տեղ Մ. Խորենացին նշում է, թէ ինչպէս Արտաշէս Ա-ն եւ նրա որդի Տիգրան Բ-ն Յունաստանից եւ Փոքր Ասիայից Հայաստան են բերում անտիկ արուեստի մի քանի քանդակներ, որոնց թւում «...զՀերակլայն գառնապատկերն զՎահագն յիւրեանց վարկանելով նախնի (իսօքը Վահեւունի քրմերի մասին է՝ Ե. Մ.-Մ.), կանգնեցին ի Տարօն յիւրեանց սեփեական գեւղն յԱշտիշատ, յետ մահուանն Արտաշիսի», իսկ Ափրոդիտէի ար-

<sup>1</sup> ՄՈՎՍԷՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ Մատենագրութիւն, Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց, Վենետիկ, 1865, էջ 301:

ճանը իբրև Հերակլիտի տարփածուի՝ կանգնեցնում են հենց Հերակլիտի արձանի մօտ՝ «յաշտից տեղիսն»<sup>2</sup>:

Պատմաճօր այս վկայութիւններով պարզում է, որ Աշտիշատը եւ Պաղատ լեռն այն սրբավայրերն էին, որտեղ Աստղիկ դիցուհին հելլենիստական դարաշրջանում յատուկ պաշտամունքի է արժանացել:

Անդրադառնալով դիցուհու ծննդաբանութեանը, պատմիչը յենւում է Բերոսեան Սիբիլայի հաղորդած տուեալների վրայ, ըստ որոնց Աստղիկը ներկայանում է իբրև Նոյ-Քսիսուկթրոսի դուստր, Զրուանի (Սեմի), Տիտանի (Քամի) եւ Հապետոսթէի (Հաբեթի) հաշտարար քոյր: Զրուանը փորձում է իր որդիներին թագաւոր կարգել բոլորի վրայ, սակայն Տիտանը եւ Հապետոսթէն ընքոստանում են եւ դաւ նիւթում նրանց դէմ: Աստղիկը միջամտում է եւ հաշտեցնելով երկու կողմին՝ Զրուանի փրկուած որդիներից մի քանիսին ուղարկում է արեւմուտք՝ Օլիմպոս լեռը<sup>3</sup>: Այսպիսով, Մ. Խորենացու երկում Աստղիկը մէկ յիշուում է որպէս դիցուհի՝ Արամազդի դուստր ու Վահագնի տարփածու, մէկ էլ որպէս առասպելական նախնու՝ Նոյ-Քսիսուկթրոսի դուստրը, Զրուանի, Տիտանի ու Հապետոսթէի քոյր:

Աշտիշատի Աստղիկի գլխաւոր մեհեանի մասին տեղեկութիւն է հաղորդում նաեւ Ազաթանգեղոսը, նոյնացնելով նրան յունական Աֆրոդիտէի հետ: Նրա «Հայոց պատմութեան» էջերում յիշատակում է Վահագն-Անահիտ-Աստղիկ երրորդուած մեհեանատեղին, որի «...երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղիկն էր, Սեմեակ<sup>4</sup> Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս»<sup>5</sup>: Դիցուհու այս գլխաւոր սրբավայրը, ըստ մեր պատ-

<sup>2</sup> ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ Մատենագրութիւն, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1865, էջ 84, 88:

<sup>3</sup> ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ Մատենագրութիւն, Պատմութիւն Հայոց, էջ 16:

<sup>4</sup> «Սեմեակ» բառն գրաբարում նշանակել է նաեւ «ննջարան» (տե՛ս ԱՃԱՌԵԱՆ ՆՀ, Հայերէն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, էջ 201): Բ. Մարգարեանն իր «Ազաթանգեղոսը եւ իւր բազմադարեան գաղտնիքը» աշխատութեան մէջ (Վենետիկ, 1890, էջ 136-137) նշում է նաեւ, որ «սեմեակ» բառը՝ «ննջարան» իմաստով սերում է Աստղիկի անունից, քանի որ սանկրիտերէն Astara նշանակել է «ննջասենեակ, անկողին»:

<sup>5</sup> Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 411:

միջների, գտնուում էր Վահագնի մեհեանի հարեանութեամբ, որի տարփածուն, հարսը եւ կինն է համարուել Աստղիկը:

Հայ հին մատենագրութեան մէջ դիցուհու մեհեանատեղիներից մէկն էլ տեղադրուում է Վանից հարաւ ընկած Արտամես քաղաքի մօտակայքում, ուր Արտաշէս Բ-ն «...ի մէջ երեքարմատեան գոգաձեւ հովտին փոփու, որ երից քլրոցն խոնարհի՝ շինէ աշտարակ քարձարբերձ փորուածոյ միջոցաւ, եւ ի վերայ նորա կանգնէ զԱստղիկեան պատկերն եւ մօտ նորա գտուն գանձու պաշտպանութեան կոոցն»<sup>6</sup>: Թովմայ Արծրունու այս մանրագինն նկարագրութիւնը լրացնում է այլ աղբիւրներում հանդիպող Արտամես քաղաքին վերաբերող տեղեկութիւնները, այլեւ օգնում է պատկերացնելու, թէ ինչ էին իրենցից ներկայացնում հին մեհեանատեղիները: Ղ. Ալիշանի հաւաստմամբ, Արտաշէս Բ-ն իր ընտանիքով շատ էր կապուած աստուածուհու պաշտամունքի հետ, իսկ նրա տիկնոջ՝ Սաթենիկի սիրոյ մասին՝ հանդէպ Աստղիկը, ասում է, որ նա չկարողացաւ ազատուել Աստղիկի պաշտամունքից անգամ քրիստոնէութեան ընդունումից յետոյ ու շարունակում էր երկրպագել մեր այս աստուածուհուն եւ զբօսատեղի էր ընտրել նրա արձանի ու մեհեանի ստորոտները<sup>7</sup>:

ԺԲ. դարի մատենագիրներից Միքայէլ Ասորին յայտնում է Աստղիկի ծննդաբանութեան եւ ժառանգած տիրոյթների մասին՝ լրացնելով պատմաճօր վերեւում յիշատակուած տեղեկութիւնները. «Ասեմ եւ այլ դուստր մի Նոյի Աստղ<sup>8</sup> անուն, որ էառ ի հօրէ զմասն ինչ հարաւոյ ի ժառանգութիւն»<sup>9</sup>: Այսպիսով, Նոյի դուստրը՝ Աստղ եւ Աստղիկ անուններով յիշատակուող, Նոյի որդիների պէս երկրի մի մասն է ժառանգում հարաւային կողմերում, որի ժողովուրդը համարում է «...յագգէ դստերն Նոյի յԱստղիկ սերեալ»<sup>10</sup>: Միքայէլ Ասորու «Ժամանակագրութեան» էջերում հանդիպում ենք նաեւ դիցուհու նոյնացմանը յունական

<sup>6</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն Արծրունեաց տան, Եր., 1935, էջ 88:

<sup>7</sup> Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 280:

<sup>8</sup> Տեառն Միխայելի Պատրիարքի Ժամանակագրութիւն, յերուսաղէմ, 1870 (Միքայէլ Ասորին Նոյի դստերը յիշում է Աստղ եւ Աստղիկ անուններով):

<sup>9</sup> Անդ, էջ 17:

<sup>10</sup> Անդ, էջ 63:

Աֆրոդիտէի հետ. «...եզիտ ի վերայ գերեզմանին պատկեր Աստուրդկայ, որ է Ափրոդիտէս»<sup>11</sup>:

Միջնադարեան մէկ այլ աղբիւրում՝ «Յայսմաւուրքում» եւս կայ պահպանուած մի յիշատակութիւն, ըստ որի Նոյը ջրհեղեղից յետոյ «...ծնաւ որդիմի մանիտոն անով. եւ դուստր մի աստղիկ» անունով<sup>12</sup>: «Յայսմաւուրքի» մէկ այլ, օգոստոսի 6-ի, Քրիստոսի պայծառակերպութեան օրուայ յօդուածում Աստղիկ դիցուհու անունան հիտարէն օգոստործւում է նրա յունարէն համանունը<sup>13</sup>, ինչպէս նաեւ հաւաստում է Աստղիկ դիցուհուն նուիրուած Վարդավառի տօնը եկեղեցու կողմից Քրիստոսի պայծառակերպութեան եւ վարդալին այլակերպութեան յարմարեցնելու հանգամանքը: Միեւնոյն ժամանակ տրւում է Վարդավառի տօնի անունան ստուգաբանութիւն, ըստ որի այն սկզբնապէս կապւում է դիցուհու «վարդամատն» մակդիրի – նուիրաբերուող ծաղկի<sup>14</sup> հետ. «Ձի յայնմ աւուր՝ հեթանոսք ափրոդիտէայ տօնէին: Եւ կոչէին զնա վարդամատն եւ ոսկեծղի, եւ զվարդն նմա ընծայ մատուցանէին: Եւ զնա կոչս ասէին ի փրփրոյ ծովու եւ յարեւել ծնեալ: Վասն այսորիկ անուանէին զտօնս զայս վարդավառ՝ զի Քրիստոս ըստ նմանութեան վարդի մինչեւ ի յայլակերպութիւն որպէս թէ վարդ ի կոկոն էր»<sup>15</sup>:

ԺԳ. դարի վերջում կիրլիկիայում ստեղծուած Տօնապատճառ ձեռագիր ժողովածուն<sup>16</sup> աւելի է զարգացնում Աստղիկ-Աֆրոդիտէի ծննդեան մանրամասները եւ աներկբայօրէն Վարդավառ անունը բխեցնում վարդ ծաղկի անունից: Խնդրոյ առարկայ հաստատում, որի հեղինակն է համարւում Յովհաննէս Կոզեռն վար-

<sup>11</sup> Անդ. էջ 134:

<sup>12</sup> Յայսմաւուրք, Կ. Պօլիս, 1730, մայիսի 17, էջ 56հ:

<sup>13</sup> Անդ. էջ 46դ:

<sup>14</sup> Գրիգոր Նարեկացու Վարդավառի տաղը եւս հաւաստում է, ըստ Մ. Արեղեանի, վարդի աւելուցութիւնն այս տօնի հետ (տե՛ս ԱՔԵՂԵԱՆ Մ., Երկեր, հ. 5, Եր., 1975, էջ 159):

Գոհար վարդըն վառ առեալ  
 ի վեհից վարսիցն արփեմից՝  
 ի վեր ի վերայ վարսիցն  
 ծաւալեր ծաղիկ ծովային:

<sup>15</sup> Յայսմաւուրք, էջ 46դ:

<sup>16</sup> Սր. Յակոբեանց, Տօնապատճառ, ձեռ. 1272:

դապետը, ի մասնաւորի նրա «Վասն Վարդավառի Տաւնին» գրուած քում ի թիւս հեթանոսական մի շարք աստուածութիւնների՝ Արամազդի, Անահիտի, Վահէի եւ Վահագնի, այդտեղ յիշատակուում է նաեւ Աֆրոդիտէ-Աստղիկն<sup>17</sup> իր տօնացոյցով. «Եւ յամառնային ժամանակն տաւնէին Ափրոդիտէ»<sup>18</sup>: Վերջինիս ծնունդը եւ նրա պաշտամունքային տօնի՝ Վարդավառի անունը բացատրելու նկատառումով հեղինակը վերապատմում է աստուածների ծըննդաբանութիւնը, թէ ինչպէս տիեզերակալ Կրոնոս աստծու անդրանիկը՝ Արամազդը, կասկածելով, որ հայրը կարող է ունենալ իրեն մրցակից երկրորդ որդուն, վերջինիս ծնունելուց անմիջապէս յետոյ սպանում է երկուորեակ եղբօրը եւ նետում ծովը. «Եւ ծովու փրփրեալ յարեւնէն, եւ ի սպիտակ փրփրոյն ընծայեր զԱփրոդիտէս»<sup>19</sup>; գոր եւ ստաբանեալ ասէին, թէ ընդ որ անցանէր եւ ընթանայր, յընթացիցն արիւն իջանէր յոտից նորա, եւ վարդ եւ մուրտ բուսանէր: Իսկ խաւարեալ ի լուսոյ հեթանոսական սովորութիւնն գտանն նորա վարդավառ անուանէին, եւ զվարդ նմա ընծայ մատուցանէին»<sup>20</sup>:

Ղ. Ալիշանի «Հին հաւատքում» բերուում է ԺԳ. դարի մատենագիր Վանական Վարդապետի այն վկայութիւնը, ըստ որի Գրիգոր Լուսաւորչի կողմից հեթանոսական տաճարների աւերման եւ աստուածների տօների խափանման ժամանակ խաթարուել է նաեւ Աստղիկին նուիրուած Վարդավառի տօնը<sup>21</sup>: Սակայն, ըստ հեղինակի, դա չի խանդարել Աստղիկի նկատմամբ ժողովրդի մէջ եղած մեծ սիրուն եւ պաշտամունքին:

Միջնադարի մեծ մտածողներից մէկը՝ Գրիգոր Մագիստրոսը, իր «Թղթերից» մէկում, խօսելով ինձորի առասպելական բուժիչ յատկութիւնների մասին, նշում է բառացիօրէն հետեւեալը. «Խնձորս երբեմն յԱստղկայ շնորհեալ, ոչ միայն կնոջն հասա-

<sup>17</sup> Ըստ միջնադարեան գրաւոր յուշարձանների՝ Աստղիկը յունական Աֆրոդիտէի համապատասխանութիւնն է:

<sup>18</sup> Տօնապատճառ, ԺԶ:

<sup>19</sup> Ի տարբերութիւն Սորենացու, որն յենում է Սիբիլայի հաղորդած ասանդութեան վրայ, Աստղիկը ոչ թէ Կրոնոսի (Ջրուան) դուստրն է, այլ վերջինիս քոյրը եւ Նոյի դուստրը (տես՝ Մովսէսի Սորենացոյ Մատենագրութիւն, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1865. էջ 16):

<sup>20</sup> Տօնապատճառ, ԺԶ:

<sup>21</sup> Ղ. Ա. ԻՇԱՆ, նշ. աշխ., էջ 281-283:

Ուրբ առփանաց, այլեւ զկեանս շնորհեալ պատժիցն մահու»<sup>22</sup>: Այս հատուածը դրախտային պտուղը փաստօրէն առնչում է Աստղիկ դիցուհու հետ՝ մի բան, որ այլուր, հայ մատենագրութեան մէջ չենք գտնում: Մինչդեռ, այդպիսի տուեալներ կան պահպանուած ժողովրդական աւանդութեան մէջ. յայտնի են Աստղիկ դիցուհուն նուիրուած որոշ ազգագրական տուեալներ, ըստ որոնց Վարդավառի տօնին ընդունուած է եղել իրար խնձոր նուիրելը: Իսկ ազգագրական որոշ մարգերում Վարդավառից առաջ խնձոր ուտելն արգելուած է եղել<sup>23</sup>:

Այդ նոյն ժամանակաշրջանի մէկ այլ իմաստասէրի՝ Փիլոն Եբրայեցու ճառերից մէկում հպանցիկ համեմատութեան մէջ է դրում Աստղիկ դիցուհին Արուսեակ մոլորակի հետ<sup>24</sup>:

Տարօնի պատմութեան հեղինակը՝ Յովհան Մամիկոնեանը, մի շարք ամբողջների եւ բերդերի թւում յիշատակում է աստղ հիմքով մի քանի տեղանուններ՝ Հաշտեանք գաւառի Աստեղունս (կամ Աստեղոս ամրոցը, որ գտնուում էր Արձան կոչուած վայրի, Վիշապ քաղաքի կողմերում<sup>25</sup>: Թերեւս նոյն վայրի մասին է յիշատակում պատմիչը մի այլ տեղում, այս անգամ ամրոցն անուանելով Աստղօն եւ այն տեղադրում է Օձ քաղաքի մօտակայքում՝ Այծսան(ա) ձորի կողմերում, ինչպէս նաեւ յիշում է Աստղաբերդ բնակավայրը<sup>26</sup>: Կարելի է ենթադրել, որ նշուած տեղավայրերը ժամանակին հանդիսացել են հեթանոսական դիցուհու պաշտամունքային վայրեր<sup>27</sup>:

## ԵՐԱՆՈՒՀԻ ՄԵԼԻՔ-ՄՈՒՐԱԴԵԱՆ

<sup>22</sup> Գրիգոր ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՊԵՐԵՐ, *Ալեքսանդրապօլ*, 1910, էջ 50:

<sup>23</sup> ՍԱՄՈՒԷԼԵԱՆ Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Եր., 1931, էջ 287; ՄԱՆՈՒԿԵԱՆ Ս., Հայ եկեղեցու տօները, *Թեհրան*, 1980, էջ 189:

<sup>24</sup> Փիլոնի Հեբրայեցոյ ձառք, Թարգմանեալք ի նախնեաց մերոց, *Վենետիկ*, 1892, էջ 237:

<sup>25</sup> ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, Պատմութիւն Տարօնոյ, *Վենետիկ*, 1832, էջ 28:

<sup>26</sup> Անդ., էջ 58:

<sup>27</sup> Բագմաթիւ են նաեւ Աստղաբերդ անուամբ եւ առհասարակ աստղ հիմքով տեղավայրերը Տարօնի, Վասպուրականի եւ այլ գաւառներում, որոնք հաւանաբար, Աստղիկի պաշտամունքի հետքեր են (տես՝ ՄԵԼԻՔ-ՄՈՒՐԱԴԵԱՆ Ե., Աստղիկ դիցուհու պաշտամունքային վայրերը, *էջմիածին*, հ.10, 2000թ.):

## **Records on Pagan Goddess Astghik in Ancient Armenian Sources** (summary)

Eranouhi Melik-Mouradian

This paper examines references to the name, myths and worship of the pagan goddess Astghik in ancient Armenian literary sources.

Some of the most significant sources in the study of the Armenian pagan religion are the history accounts by Movses Khorenatsi, Agathangeghos, Pavtos Byuzand, Tovma Artsruni and H. Mamikonyan, where we find valuable testimonials about the forms and characteristics of worship, as well as, stories related to Astghik. In the history book of Khorenatsi, the "Father Historian" of Armenians, Astghik is referred to once as a goddess who was the daughter of Aramazd and wife of Vahagni and once as the daughter of the mythical ancestor Noah-Xisudros.

This demonstrates that Astghik was distinguished by widespread popularity and notoriety. Furthermore, as recorded, she was the most beloved and worshipped goddess after Anahit in the pantheon of Armenian paganism. The works of the above-mentioned historians, as well as others complementing Khorenatsi's accounts have preserved certain aspects of the festivals and religious ceremonies at the sites of worship of the goddess' genealogy.